

Կրօնաստանը ծաղկեալ, անասպատք պըտղեալ,
 ճգնաւորք մաքրեալ,
 Պահեցողք զատեալ 'և առաքինացեալ,
 սրբոցն հաղորդեալ.
 Գեաքն հորդահոսեալ, հովիտք առողեալ,
 պտղօք զարգարեալ.
 Առաջնորդք յայտնեալ, յաշտանակ կանդնեալ,
 հարց շաւղօք զնացեալ.
 Տօնք հանդիսացեալ, խորհուրդք քարոզեալ,
 խնկեալ, մեծարեալ:
 Ինքեանք դործեցեալ, օրինակ եղեալ
 'և այլոց ուսուցեալ:

26. ՄՈՎԱՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

«Մովսէս վարդապետն, որ եղեւ կաթողիկոս, ունէր միաբանս եւ աշակերտս բազումս» (Դաւր. 240): Դժուար է այժմ յանուանէ յիշել Մովսիսի աշակերտները, որոնք կա'մ ուղղակի իր ձեռքին տակ զարգացան եւ կա'մ իր բացած վանատուններու եւ դպրատուններու մէջ ծաղկեցան: Ժամանակակից մը, մէկը Մովսիսի աշակերտներէն՝ Զաքարիա Վաղարշապատցի այսպէս կը թուէ Մովսէս կաթողիկոսի ականաւոր աշակերտներու անունները¹.

«Ես վերջինս ի վերջին դարուս... Զաքարիա եւեթ բանի սպասաւորս կոչմամբ վարդապետ. աշակերտ դուրով մեծի եւ տիեզերահօչակ երկրորդ Լուսատուին Հայոց եւ վերստին նոր նորոգողի սուրբ Էջմիածնի տեառն տէր Մովսիսի կաթողիկոսի, որ էր

¹ Զեռ. էջմ. 201 (Աստուածաշունչ):